



□□□□□□ □□□□□□□□□□

Ծնվել է 1951թ. նոյեմբերի 2-ին Կարմիրի շրջանի Մարտունի գյուղում, բանվորի ընտանիքում:1958թ.ծնողների հետ տեղափոխվել է Բյուրեղավան, նույն ուսումնական տարում ընդունվել տեղի ութամյա դպրոցը և այն ավարտել 1966-67 ուսումնական տարում՝ գերազանց առաջադիմությամբ:1967թ. ընդունվել է Ղափանի Լեռնային Մետալուրգիական տեխնիկում, ավարտել 1970-թ.-ին և անմիջապես գործուղվել Մարտունու շրջանի Լիճք գյուղ՝ աշխատելու տեղի երկրաբանական արշավախմբում: 1970թ. աշնանը զորակոչվել է բանակ և երկու տարի ծառայել ԳԴՀ-ի Կալթենբուրգ քաղաքում: 1972թ.-ին վերադարձել է բանակից և ընդունվել աշխատանքի Բյուրեղավանի «Հայքյուրեղապակի» գործարանում որպես բանվոր, որտեղ աշխատել է մինչև 1975 թվականը: 1975 թվականից մինչև 1983 թվականը աշխատել է Բյուրեղվանի Թիվ 51 Պրոֆտեխնիկական ուսումնարանում որպես պարետ:1983 թվականից մինչև 1988 թվականը աշխատել է Հայագրոարդի հանրապետական բազայում որպես էլեկտրիկ:Փետրվարյան շարժումը ևս նրան հրապարակ տարավ, նա ևս նվիրվեց Արցախյան շարժմանը: 1983 թվականի աշնանը Ս. Վարդանյանը գնաց արցախ, հետո՝ 1990 թվականին այնտեղ տեղիփոխեց իր ամբողջ ընտանիքը՝ կնոջն ու հինգ երեխաներին: 1990թ.-ին Վարդանյանի ընտանիքը մշտական գրանցում ստացավ Ասկերանի շրջանի Դաշուշեն /Քարաշեն/ գյուղում: Համախոհների հետ Ս. Վարդանյանը այնտեղ կազմակերպեց ոչ մեծ Կոպերատիվ ձեռնարկություն, որի «Տանիքի» ներքո էլ սկսեց ծնունդ առնել նրա մարտական ջոկատը, որ կոչվեց «Արցախ»:1990թ.-ից Ս. Վարդանյանը «Արցախ» ջոկատի հրամանատարն էր: Նա իր ջոկատով պայքարում էր Շահումյանի, հետո՝ Էրքեջի, Բուզլուխի և Մանաչիդի համար: Վերին Շենի բարձունքն ազատագրելիս ջոկատն ընկավ շրջապատման մեջ: Սամվել Վարդանյանը առաջին գծում էր:Գնդակների տարափի տակ էլ կտրվեց նրա կյանքի թելը:Դա 1991 թվականի սեպտեմբերի 14-ն էր: Նրա անունը մնաց, և դարձավ հիշողություն, և այդ հիշողության կանգառներից մեկը եղավ Բյուրեղավանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, որն այժմ կրում է Ազատագրական հերոսամարտի նահատակ Սամվել Վարդանյանի անունը: